լեռներում ու ձորերում փախստական եղած շինականները մի անկիւն չունէին պատսպարոելու, երբ քաղաքացիք, թշնամու գերութիւնից ազատոելու համար, իրանց տները թողել էին անբնակ եւ փաղչել էին անմատչելի ժայռերի խոռոչներում, այդ սարսափի ու տագնապի ժամանակ, Որոտն գետի ձախ ափի մօտ, Հալիձոր գիւղի հանդէպ, հիմնւում է Սիւնեանց մեծ անապատը, Տաթեւի վանքից երեք ժամ հեռաւորութեան վրայ: Այդ վանքը այլ անունով կոչում է Հարանց անապատ:

Սիւնեաց մեծ անապատի հիմնադիրը եղաւ (1610 թ.) Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը, որը, թողնելով իր վանքը եւ վանական կեանքը, ուխտեց անապատական լինել, այն դէպքերից յետոյ, երբ նա Արագած լեռան այրերից մէկի մէջ գտաւ մի ճգնաւոր, ծունր իջած դրութեան մէջ, աչքերը դէպի երկինք ամբարձած բայց անշարժ, ինչպէս քարէ արձան: Ճգնաւորը մեռած էր, բայց ո՛վ գիտէ, ինչ ժամանակից, նա նոյն դրութեան մէջ, այնպէս անապական մարմնով մնացել էր այն քարանձաւում: Այդ տեսարանը այն աստիճան ազդեց Սարգիս եպիսկոպոսի վրայ, որ նա ուխտեց թողնել աշխարհը եւ անձնատուր լինել ճգնաւորական կեանքի: Նրան գործակից եղաւ Տէր-սարգիս Տրապիզոնցին, մի հմուտ եւ ուսեալ քահանայ, որը կնոջ վախճանոելուց յետոյ իր բոլոր հարստութիւնը վաճառել եւ բաժանել էր աղքատներին եւ սկսել էր այնուհետեւ անապատական կեանք վարել:

Սիւնեանց մեծ անապատը կոչոեցաւ Թանահատի վանք, այն հռչակաւոր Թանահատի վանքի անունով, որ մի ժամանակ իր սոսկալի խստակեցութեամբ յայտնի էր Վայոց ձորում. Հէնց այդ անոան մէջն էր նրա նշանակութիւնը: Այդ վանքի միաբանները ատում էին, խորշում էին ամէն տեսակ թանից, այսինքն՝ տաք, ջրալի ապարից, եւ այդ պատճառով կոչոեցան «Թանատեացներ»: Ամբողջ տարին կերակրւում էին միայն ցամաք հացով եւ ջրով, այն եւս օրը մի անգամ, իսկ տօն օրերում գործ էին ածում փոքր-ինչ բիւրեղէն իւղ, բայց միս կամ գինի՝ ոչ երբեք:

Սիւնեաց մեծ անապատը կրկին վերականգնեց այն վաղեմի կրօնական կարգերն ու կանոնները, որոնք, զանազան քաղաքական դժբախտ հանգամանքների պատճառով, խանգարոած էին մեր անապատներում: Իսկ վտանգաւորը այն էր, որ նա մտցրեց մի նոր եւ, հայոց եկեղեցու հոգուն հակառակ, բոլորովին այլ կղերական ուղղութիւն, այն է՝ զրկել իրան կամքից եւ անպայման հնազանդութեամբ հպատակել միայն առաջնորդի կամքին. ամէն օր առաւօտեան եւ երեկոյեան խոստովանոիլ առաջնորդի առջեւ օրոայ յանցանքներն ու մտածութիւնները, ոչինչ ստացոածք չունենալ, ամէն ինչ հասարակաց լինել եւ այլն: Ես այլեւս չեմ խօսում այն կանոնների մասին,